

Դյուրգ Ռազո
(Բուդապեշտ)

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Հայ գրականությունը Հունգարիայում ունի իր պատմությունը: Սկսած 19-րդ դարի առաջին կեսից հայ գրականությունը թարգմանել են, կարդացել ու գրել նրա մասին: Եղել է ժամանակաշրջան, երբ այն առանձնապես տարածվել է, իսկ 1945 թվականից, երբ Հունգարիայում հաղթանակ տարավ ժողովրդա-դեմոկրատական կարգը, հայ գրականությունը, ինչպես և Սովետական Միության մյուս ժողովուրդների գրականությունները, լավագույն հրատարակություններով մատուցվում է հոնգար ընթերցողներին: Այս հոդվածում մենք համառոտակի նկարագրում ենք Հունգարիայում հայ գրականության անցած ուղին, ծանոթացնում գրականության տարածման զարգացման հետ կապված նշանավոր ու հետաքրքրական փաստերին: Բայց այդ փաստերի պատմությամբ զբաղվելուց առաջ, դրանք լավ ըմբռնելու համար, հարկավոր է կանգ առնել երկու նախնական հարցերի վրա՝ ինչ գիտեն Հունգարացիները, ընդհանրապես, հայ ժողովրդի մասին, ինչպիսի՞ն է եղել Հունգարիայի հայերի դերը Հունգարիայում հայ գրականության մասսայականացման գործում:

* *

Հունգարիայում միջնակարգ կրթություն ունեցող յուրաքանչյուր մարդ լավ գիտե, որ հայ ժողովուրդը մեկն է այն հնագույն ժողովուրդներից, որոնք իրենց լուծման են դրել եվրոպական կուլտուրալի սկզբնավորման և զարգացման գործում:

Հունգարիայում գիտեն, որ հայ ժողովուրդը փառավոր ու մրրկալից պատմության, սոսկալի տանջանքների երկար ուղի է անցել, գիտեն հատկապես առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում կատարված արյունալի ջարդերի մասին, գիտեն այն մասին, թե ինչպիսի հարուստ ու ծաղկուն հայկական գաղութներ են գոյություն ունեցել տարբեր երկրներում և այն մասին, որ հայերը ամենամոտ ու աննախընթաց ժողովրդական համախըմբվածության և ազգային կյանքի ամենաբարձր մակարդակի են հասել հատկապես Հայկական Սովետական Ռեսպուբլիկայում:

1945 թվականից հետո Հայկական ՍՍՌ-ի մասին ընդհանուր գիտելիքները Հունգարիայում դարձան ավելի հարուստ և ճիշտ, քան առաջ:

Սկսած միջին դարերից, հոնգարական պետության տերիտորիայում ապրել են հայեր, որոնք լրիվ ընտելանալով հոնգարական հասարակության յուրօրինակ սոցիալական տարբեր շերտերին ու դասակարգերին, միաժամանակ պահպանել են նվիրվածությունը հանդեպ իրենց սեփական, հին լեզուն, հանդեպ իրենց սեփական ազգային կուլտուրան: Իհարկե, Հունգարիայում նույնպես գործել են ֆեոդալական ու կապիտալիստական հասարակական պրոցեսի ընդհանուր օրենքները և, իհարկե, Հունգարիայի հայերը նույնպես են-

թարկվել են այդ պրոցեսի երևույթներին, բայց իրենց նոր հայրենիքում նրանք երբեք չեն ննջարկվել ազգային ճնշման: Հունգարիայի միջնադարյան որոշ գյուղեր իրենց անվան մեջ պահպանել են «örmény» (հայկական) բառը:

Հայերի թիվը Հունգարիայում հատկապես ավելացել է 17-րդ դարի երկրորդ կեսին, երբ Մուդավիայից հայերը վերաբնակվել են այն ժամանակվա Հունգարիայի արևելյան մարզերում՝ Տրանսիլվանիայում (այժմ Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկա), և այդ ժամանակից արդեն մեզ հայտնի են Տրանսիլվանիայում և այն ժամանակվա Հունգարիայի ուրիշ մարզերում ապրող հայերի հասարակական ու կուլտուրական կյանքի գործիչների անուններ: Նրանք տալազրել են իրենց գրքերը հայոց, ինչպես նաև հունգարական լեզուներով, իսկ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին նրանք հունգարական լեզվով հրատարակել են իրենց սեփական ամսագիրը՝ «Armenia», որի տարեկան հատորները Հունգարիայի հայերի կյանքի ու պատմության և ընդհանուր հայկական կուլտուրայի հետ ունեցած նրանց կապի անվիճելի վկայությունն են հանդիսանում: Նկատի ունենալով այն, որ այդ ամսագրում հրապարակվել են նաև գրական հարուստ նյութեր, որոնք նպաստել են Հունգարիայում հայ գրականության տարածմանը, մեր հոգվածի հետագա մասում մենք մանրամասնորեն կգրադվենք այդ հարցով:

* * *

Հունգարիայում հայ գրականության երևալուց դեռևս առաջ մի հետաքրքրական կապ է եղել հայ գրականության և Հունգարիայի միջև: Այդ փաստը կապված է մի հունգարացի գիտնականի անվան հետ: Միստոտֆալու գյուղացի Միկլոշ Կիշը (Misztotfalusi Kis Miklos, (1650—1702) աստվածաբան-գրականագետ էր, բայց առաջին հերթին գրատպության արվեստագետ էր, հայտնի փորագրող և տառ ձուլող: Այդ արվեստով նա հիմնականում զբաղվել է Հոլանդիայում, Ամստերդամում: Այն մասին, թե ինչպես է նա կապվել հայերի հետ, ինչպես է ստեղծել հայկական բարձրարվեստ տառեր գրատպության համար և թե, ընդհանրապես, 17-րդ դարի երկրորդ կեսին հայ գրականությունն ինչպես է տարածվել Հունգարիայում՝ այդ հարցերի մասին հրատարակվել է հունգարացի պատմաբան էդեն Շյուցի հարուստ կերպով փաստավորված հոդվածը՝ «Միստոտֆալու գյուղացի Միկլոշ Կիշի ծառայությունները հայերին» վերնագրով (Հունգարական գրքի տեսություն, 1957, № 4):

Հայ գրականության վերաբերյալ մեզ հայտնի առաջին հունգարական հոդվածը լույս է տեսել 1835 թվականին «Տուրոմանոշ Դյույտեմեն» ամսագրում, Եդիշե Վարդապետի «Վարդանանց պատմությունը» գրքի գրախոսության ձևով, հայերի ու պարսիկների սրբազան պատերազմների մասին զեկուցման հետ միասին, որը Կ. Ֆ. Նայմանը թարգմանել է անգլերեն: Այդ հոդվածի հեղինակ Իշտվան Խորվաթը իր ժամանակի ամենահանրահայտ գիտնականներից մեկն էր: Իշտվան Խորվաթն առանձնակի սեր էր տածում դեպի հայ ժողովուրդը, դեպի հայոց պատմությունը: Սելենիի անվան հունգարական ազգային գրադարանում պահպանվում է նրա ձեռագիր ժառանգությունը, այդ թվում նրա կողմից կազմված և մինչև այժմ չհրատարակված հայ գրականության բիբլիոգրաֆիան՝ լատիներեն խորագրով՝ «Adversaria pro notitia historiae literariae armeniacae» («Նոթեր հայ գրականության պատմությանը ծանոթանալու

մասին»): հորվաթի հիշյալ հոգվածը «Տուղոմանոշ Դյուլտեմեն» ամսագրում փաստորեն գրախոսություն չէ. գրախոսվող գրքի մի շարք տվյալների կապակցությամբ հոգվածի հեղինակը շարադրում է իր սեփական գիտելիքներն ու մտքերը հայ ժողովրդի և հայ գրականության ամսին: Նա գրում է Եվրոպայում և Ասիայում հայ գրականության լայն տարածման մասին և գտնում, որ դա ոչ միայն ազգային սնկախությունը կորցնելուց հետո հայ ժողովրդի աշխարհով մեկ ցրվելու արդյունքն է, այլ որ դա նշան է այդ հնագույն գրականության հարստության և բազմաթիվ հայ գործիչների անձնուրաց աշխատանքի, գործիչների, որոնք ջանք չեն խնայել հին ու նոր ժամանակների այդ հրաշալի գրական հուշարձանների պահպանման համար: Այնուհետև, գրախոսվող գրքի առնչությամբ, հորվաթը գրում է հայ հին պատմագիրների մասին, կապեր է որոնում Հունգարիայի պատմության հետ և իր երկրի գիտնականներին ու հատկապես Հունգարիայում ապրող հայերին կոչ է անում լայնորեն մշակել այդ հարուստ և շատ հարցերում հունգարներին վերաբերող պատմական նյութեր:

1867 թվականին «Խաղանկշա Կյուլֆյուլդ» կոչվող գրական և գիտա-մասսայական ամսագիրը հրատարակել է Սամուելյար քաղաքի բնակիչ, ժուռնալիստ Անտալ Մոլնարի հոգվածը: Հիշյալ քաղաքը Տրանսիլվանիայի հայկական կենտրոններից էր: Այդ հոգվածը իրենից ներկայացնում է պատմական և ազգագրական մասսայական տեսություն, բայց այն առաջին անգամ հիշատակում է հայ նոր գրականության մասին (18—19-րդ դարերի) հետևյալ բառերով. «Այդ ժողովուրդն իր գրականության արժեքավոր ստեղծագործություններով կարճ ժամանակի ընթացքում ապացուցեց, որ ունի ոչ միայն փայլուն անցյալ, այլ նաև փր ապագան» (Molnar Antal: Az ormeny nemzet (հայ ազգը) Hazanksa Kulfold. 1867, հատոր 1-ին, էջ 23—26):

1869 թվականին Պեշտ քաղաքում հրատարակվել է գերմանացի արևելագետ Կ. Ֆ. Նայմանի «Az ormeny nemzet irodalomtorteneten et Kiserlete» (փորձ հայոց ազգի գրականության պատմության) վերնագիրը կրող աշխատության թարգմանությունը: Գիրքը հունգարերեն թարգմանել է ու մշակել հունգարահայ Յակաբ Ավետր: Քանի որ այդ գրքի հիմքը հանդիսանում են Մխիթարյան հոգևորականների աշխատությունները, բնական է, որ գիրքը, հայ հին գրականության տեսությունից բացի, տվյալներ է պարունակում արևելահայկական գրականության մասին մինչև 18-րդ դարը, իսկ արևմտահայկական գրականության մասին տալիս է նույնպես իր ժամանակի համար թարմ տեղեկություններ:

Հատկանշական է, որ 19-րդ և անգամ 20-րդ դարում թարգմանիչներն զբաղվել են գրեթե միայն պոեզիայի թարգմանությամբ, իսկ հայ արձակը հայտնի չի եղել հունգար ընթերցողներին, չնայած, որ հայ նոր արձակ գրականության վերաբերյալ տեղեկությունները համեմատաբար վաղ էին Հունգարիա թափանցել: 1871 թվականին «Ֆիդելիո» ամսագիրը գրել է. «Հայաստանի գրողները գեղադրություն կրթված են, որոշ ժամանակից սկսած նրանք հանգես են գալիս որպես վեպերի և մի շարք հետաքրքիր ներկերի հեղինակներ: Նրանց օրինակ են ծառայում ֆրանսիական սենտիմենտալ վեպերը...» (Figyelő (Գիտորդ), 1872, էջ 215—216):

«Մայրաքաղաքային թերթեր» («Fovarosi Lapok») ամենօրյա գրական լրագրում 1885 թվականին լույս է տեսել հունգարահայ Յանոշ Շիմաիի հոգ-

վածք հայ առաջին գրողների մասին, ժողովրդական հերոսական ասույթների հետ նրանց ունեցած կապի մասին, Մովսես Խորենացու մասին և գրական հին հուշարձանների պահպանման մասին, (Simay Janos: Az ormeny iradalom mul jarol, (հայ գրականության անցյալի մասին):

Պետական քարտուղար Լասլո Գոպչան (1865—1933) երկար ժամանակ եղել է Հունգարիայի հայերի ամենաակտիվ հասարակական գործիչներից մեկը: 1888 թվականին նա հրատարակել է առաժնեների ժողովածուի գրքույկ: Գրքույկի համառոտ նախաբանում նա հայտնում է, որ ինքը առաժնեների մի մասը վերցրել է Արդար Հովհաննիսյանի գերմաներեն հրատարակված ժողովածուից, իսկ մյուս մասն իր սեփական հավաքածուն է: Ժողովածուն մոտ 200 հայկական առաժնե է պարունակում: (Gopcsa Zaszlo: Ormeny Kozmondasok) (հայկական առաժնեներ): «Kolozsvar», 1888):

80-ական թվականների վերջին լարդեն պարբերաբար լույս է տեսնում «Արմենիա» ամսագիրը: Դրա հանդես դալն ուժեղացրեց հունգարական հասարակության ընդհանուր հետաքրքրությունը դեպի հայ ժողովուրդը, դեպի նրա ճակատագիրը և այդ ճակատագիրն արտացոլող գրականությունը: Ընդհանրապես հունգարական մամուլում ավելի ու ավելի հաճախ էին հրապարակվում տեղեկություններ հայերի մասին: Այդ տեղեկություններին են վերաբերում երկու հոդվածներ, որոնցից մեկը հրապարակվել է վերը հիշատակված «Ֆլավարոշի Լապոկ» ամենօրյա գրական լրագրում, մյուսը՝ «Մադյար Սեմլե» ամսագրում:

Առաջին հոդվածում, որի հեղինակն է հունգարահայ Լասլո էստեգարը, խոսվում է հայ նոր լիրիկայի մասին, անդրադառնալով երեք պոետների՝ Ռաֆայել Պատկանյանին, Մկրտիչ Պեշկեթյանին և Ղևոնդ Ալիշանին: Նկարագրելով ճշգրիտ հայ ժողովրդի տխուր ճակատագիրը, էստեգարը նշում է. «Ապրում է և հիմա հայ լիրիկան, այն գեղեցիկ է ու ճշմարիտ: Ծաղկում է նաև հայ ժողովրդական սեփական պոեզիան, բայց բացի ժողովրդական երգիչներից, կան նաև պոետներ և նրանք գրեթե բոլորն էլ երգում են տխուր ձայնով... Պատկանյանը, Պեշկեթյանը և Ալիշանը իսկական պոետական տաղանդներ են... Ամենաուժեղը Պատկանյանի պոեզիան է, ամենաքնքռվածը՝ Պեշկեթյանինը: Առաջինը հանդիսանում է ազգային ձգտումների երգիչը, նա չի հաշտվում պատմության զարգացման հետ, նա համարձակ հույսեր է տածում, նրա բանաստեղծություններում երբեմն անգամ ռևոլյուցիայի ոգին է հնչում...»:

Այնուհետև էստեգարի հոդվածում տրվում է «Արաքսի արտասուքը» պոեմի մանրամասն նկարագրությունն ու գնահատականը, բերված են հատվածներ պոեմի հունգարերեն բանաստեղծական թարգմանությունից: Ալիշանի ստեղծագործություններից հոդվածը ակնարկում է «Պլավուն Ավարայրի» պոեմի մասին, կրկին հունգարերեն թարգմանության բանաստեղծական հատվածներով: Հոդվածում Պեշկեթյանի պոեզիան ընդթափում է նրա երգերի թարգմանությամբ: (Esztegar Laszlo: Amai ormeny lira» (Արդի հայ լիրիկան) Fovarosi Lapok, 1899, № 210):

Այդ ժամանակաշրջանի մյուս հետաքրքրական հոդվածը լույս է տեսել «Մադյար Սեմլե» գրական ամսագրում: Այն նվիրված է Խաչատուր Աբովյանին: Հոդվածի սկզբում կարդում ենք այն մասին, թե հայկական թեման ինչքան տարածված է գերմանական ու ֆրանսիական գրականությունների ու ժուռնա-

լիստիկայի մեջ, իսկ հետո, գերմանացի գիտնական Արթուր Լեյստի աշխատության հիման վրա տրվում է հաշատուր Աբովյանի կյանքի ուղին և նրա «Վերք Հայաստանի» վեպի բովանդակությունը: Հոգվածն Աբովյանի այդ երկը բնորոշ է համարում ամբողջ հայ նոր գրականության համար: (C. H.: Egy ormeny prozairo) (Հայ արձակագիրը) Magjar Szemle (հունգարական տեսություն) 1890, № 7):

Ինչպես ասվեց, այդ թվականներին հայերի և հայ գրականության հանդեպ հետաքրքրության բարձրացմանը նշանակալից չափով նպաստեց «Արմենիա» ամսագիրը: Այդ պատճառով մի փոքր մանրամասնորեն կանգ առնենք այդ ամսագրի պատմության վրա:

* * *

«Արմենիա» ամսագրի հիմնադիրներն ու խմբագիրները եղել են հունգարահայեր: Ամսագիրը հրատարակվել է 1887 թվականից, յուրաքանչյուր ամիս: Ամսագրի լույս ընծայումը դադարեցվել է 1907 թվականին, հրատարակման 21-րդ տարում: Ամսագիրը հրատարակվել է Սամոշույվարում (Տրանսիլվանիա):

Ինչպես վերը ասվել է, ամսագիրը շատ տվյալներ է պարունակում Հոմագարիայում ապրող հայերի մասին, նրանց հասարակական դրության մասին, առանձին ընտանիքների պատմության մասին: Իրան պետք է ավելացնել այն, որ ամսագրի խմբագիրներն ու աշխատակիցները լայնորեն զբաղվում էին հայ ժողովրդի փառավոր անցյալով, աշխույժ հետաքրքրությամբ հետևում էին ամբողջ աշխարհի և հատկապես Հայաստանի հայերի քաղաքական, տնտեսական և կոլտնտրական կյանքին: Իհարկե, հայ դասական և ժամանակակից գրականությունը նույնպես արժանի գնահատական էր ստանում ամսագրի էջերում:

Թվարկել ամսագրի գոյության 21 տարիների ընթացքում հրատարակված բոլոր գրական տեսությունները, տեղեկությունները, գրողների կենսագրությունները, հայերենից հունգարերեն կատարված թարգմանությունները, մեր հոգվածի սահմաններում, իհարկե, անհնարին է:

Բայց «Արմենիա» ամսագրի ընդհանուր թեմատիկան բնութագրելու համար մենք համառոտակի կթվարկենք գրական թեմային նվիրված կարևորագույն հոգվածներից մի քանիսը:

Խոսելով ամսագրի հրատարակման առաջին տարվա մասին, հարկավոր է ամենից առաջ հիշատակել ներածական հոդվածը, որը նախապես հայտնում է գործունեության վերը նշած շրջանակների մասին, ընդգծելով, որ ամսագիրը մեծ տեղ է հատկացնում հայերենից կատարված գրական թարգմանություններին:

Առաջին համարը, ի միջի այլոց, պարունակում է ցուցակն ամսագրի աշխատակիցների, որոնց մեջ եղել են արտասահմանյան թղթակիցներ, այդ թվում՝ Պետերբուրգից և Մոսկվայից: Հրատարակման առաջին տարում Անտալ Մուրադի հոգվածաշարը, ֆրանսիական մի գրախոսվող գրքի հիման վրա, տալիս է տեսություն հայ հին գրականության մասին (F. Neve, L' Armenie chretienne et sa Literature, 1886):

1888 թվականին ամսագրում հրապարակվել են մի շարք հետաքրքրական գրական հոգվածներ. Լասլո Գոպչան գրում է համաշխարհային գրականության մեջ հայկական ժողովրդական ասույթների տեղի մասին, Լասլո էստեգարը

հայ ժամանակակից լիբերալիստական մասին, Յանոշ Շիմաին՝ հայ գրականության հիմնադիրների մասին։ Անտալ Մուլնարի ծավալուն հոգվածը, ֆրանսիական մի գրքի և էմինի՝ 1850 թվականին Մոսկվայում հայերեն հրատարակված աշխատության հիման վրա, վերլուծում է հայկական ժողովրդական պոեզիան՝ պատմական և բանասիրական տեսակետներից։ Հրատարակված են բազմաթիվ կարճ հաղորդագրություններ, դրանց մեջ՝ Րաֆֆու մասին, Սայաթ-Նովայի երգերի գերմաներեն հրատարակության մասին, Թիֆլիսում հրատարակված ռուս-հայերեն բառարանի մասին։

Ամսագրի հրատարակման երրորդ տարում գրական թեմատիկան կոնստրուկտիվ է։ Դրա փոխարեն շատ է գրվում հայերի հասարակական և տնտեսական պրոբլեմների մասին։ Այնուամենայնիվ, այդ հատորում հանդիպում ենք նաև գրական հոգվածների՝ հոգվածներ հայ գրականության ոսկե դարի մասին (5-րդ դար), ինչպես նաև՝ Պուլգի խորամտի հոգվածը հայկական ժողովրդական պոեզիայի մոտիվների մասին։

1890 թվականին հայկական գեղանկարչության, երաժշտության ու թատրոնի մասին եղած հետաքրքրական տեղեկություններից բացի, ամսագրում կան նաև գրական հոգվածներ։

Ամսագրի հրատարակման հինգերորդ տարում լույս տեսավ Յակաբ Զիրնկարյանի գրքին պատկանող հոգվածը հայ աշուղների, մասնավորապես Սայաթ-Նովայի մասին։ Նրա բանաստեղծություններից վերցված մեջբերումներով ապացուցվում է, որ Սայաթ-Նովան եղել է իսկական հայ։ Հոգվածի հեղինակը պատմում է, թե ինչպես պոետի բանաստեղծությունները նրա թոռան կողմից դաժնվել են Թիֆլիսում։ Մովսես Խորենացու մասին ամսագրի ընթերցողներն իմացել էին նախորդ հատորներից, իսկ այդ՝ 1891 թվականին «Արմենիան» հատկապես շատ է զբաղվում մեծ պատմաբանով։ Հրատարակվում են հոգվածներ արևմտյան գիտնականների՝ Խորենացու ստեղծագործությանը նվիրված աշխատությունների մասին, տպագրվում են հատվածներ նրա գրքից, իսկ ամսագրի դեկտեմբերյան համարն ամբողջովին նվիրված է Խորենացու գործունեությանը։ Այստեղ տեղին է նշել, որ Հունգարիայի գիտնականները բազմիցս անդրադարձել են Խորենացու գործունեությանը։ Անտալ Էդելսպասերը 1878 թվականին հրատարակեց Խորենացուն նվիրված մի մենագրություն, իսկ 1892 թվականին Խորենացու «Պատմություն հայոց» աշխատությունը լույս տեսավ հունգարերեն թարգմանությամբ։

1892 թվականին Լասլո Էստեգարն ընթերցողներին ծանոթացնում է հայ ժամանակակից լիբերալիստ նուր նվաճումներին, միաժամանակ հայտնում է Հունգարիայում այդ պոեզիայի տարածման և հայկական պոեզիայի հունգարերեն տարբեր թարգմանությունների մասին։ Մի հետաքրքրական հոգված հաղորդում է Վարդան Մամիկոնյանին նվիրված դուցազններգության ֆրանսիական և անգլիական թարգմանությունների մասին։

Հրատարակման յոթերորդ տարում ամսագիրն ապշեցնում է իր թեմատիկայի լայն շրջանակով։ Տպագրվում են հոգվածներ հայ վիպագրության, պատմագրության, լեզվաբանության, ազգագրության, ճանապարհորդական նոթերի, հնագրության, ժուռնալիստիկայի ու հայ գրականության պատմության մասին։ Հունգարերեն թարգմանությամբ լույս են տեսնում Պատկանյանի ու Շահազիզի մի շարք բանաստեղծությունները։ Այդտեղ կան հայ-հունգարական հարաբերություններին վերաբերող հետաքրքրական տեղեկություններ՝ ամսագրի

մահախոսականը՝ նվիրված հունգար ժողովրդի անկախության համար մղած պայքարի առաջնորդ, մեծ դեմոկրատ, էմիգրացիայում մահացած Լայոշ Կոշուտին: Բացի այդ, զետեղված է մի հաղորդագրություն Քիֆուսից այն մասին, որ «Մշակ» հայկական ամսագիրը հրապարակել է հունգարական կլասիկ, պոետ-ռեռլյուցիոներ Շանգոր Պետեֆիի բանաստեղծությունները:

Ամսագրի հրատարակման տասներորդ տարում կան որոշ տեղեկություններ Քիֆուսում լույս տեսնող «Մշակ» ամսագրի և այնտեղի հայկական գրական ընկերության մասին: Բացի այդ, կարելի է մանրամասնություններ իմանալ տարբեր երկրներում հրատարակվող հայ մամուլի մասին:

Հրատարակման տասներկուերորդ տարում ամսագրում հանդիպում ենք առանձնապես շատ բանաստեղծությունների, որոնց թվում Րաֆֆու «Վանա ծովակ» բանաստեղծության հունգարական թարգմանությունը:

Ամսագրի հրատարակման տասներեքերորդ տարում տպագրված է մանրամասն հոդված հայկական ժուռնալիստիկայի վերաբերյալ. տպագրված է նաև հոդված Բագրատունիների շրջանում հայ գրականության մասին: Տեղեկություններ են զետեղված հայկական պոեզիայի գերմանական թարգմանությունների և Փարիզի համալսարանում հայոց լեզվի դասավանդման մասին:

Հետագա տարիներին ամսագիրն արդեն հաղորդում է Բուդապեշտի համալսարանում հայոց լեզվի և հայ գրականության դասավանդման, 18-րդ դարում հայկական տառերի հունգարական փոխադրության մասին և այլն:

Մեծ քանակությամբ հետաքրքրական հոդվածներ ու տեղեկություններ են լույս տեսել նաև «Արմենիա» ամսագրի ավելի ուշ տարիների հրատարակություններում, բայց մենք հնարավորություն չունենք տալ հրատարակված ամբողջական նյութի անգամ մոտավոր տեսությունը. ամսագիրն այնքան հարուստ է, որ մենք ստիպված ենք բնութագրել առանձին հատորների բովանդակությունը:

Պատկերացում տալու համար այն մասին, թե «Արմենիա» ամսագիրը հայ գրողներին ինչ ձևով էր ներկայացնում հունգարական ընթերցողին, բերենք մի քանի փաղվածքներ: Հասյո էստեգարն Արովյանի մասին գրում է. «Նրա ծառայությունը հանդիսանում է այն, որ նա խախտեց իր անդրկովկասյան հայրենակիցների՝ կյանքի սկզբունքների տրադիցիոն անսխալականության և հին անգրագիտության «արժեքի» մասին ունեցած հավատը...»: Պատկանյանի մասին կարդում ենք. «Նա ամենաժողովրդական հայ պոետներից մեկն է: Նրա երգերից շատերը դարձել են ժողովրդական ստեղծագործության սևփականությունը: Վերջերս տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նրա դրած երգերն այնքան մեծ ժողովրդականություն են վայելում արևելահայերի մեջ, որ մի քանի ամսվա ընթացքում դրանք վաճառվել են 8000 օրինակով...»: Երբ մեռավ Րաֆֆին, «Արմենիա» ամսագիրը տպագրեց մահախոսական ու մեծ գրողի կենսագրությունը և ասաց նրա մասին. «Նա ժողովրդի զավակն էր, դրա համար էլ նա պահպանում է միայն իր սիրելի ազգի շահերն ու բարօրությունը: Նրա հերոսները ծանոթ են ժողովրդին, նրանց սխրագործությունները վերաբերում են ներկա ժամանակին...»:

Վերջին մեջբերումները մեր առջև մի այսպիսի հարց են բարձրացնում. քաղաքական ինչ ուղղություն էր ներկայացնում «Արմենիա» ամսագիրը: Ամենից առաջ այն ցանկացել է ամրապնդել հայերի հայրենասիրական զգացմունքը, ցանկացել է նրանց տեղեկացնել ամբողջ աշխարհի և առաջին հերթին

Հայաստանի հայերի կյանքի, կուլտուրայի և հայկական պրոբլեմների մասին: Ամսագիրը հիմնադրվել ու խմբագրվել է այնպիսի հայ ինտելիգենտների կողմից, որոնք եղել են Հունգարիայի հասարակական և կուլտուրական կյանքի զուրթիչներ, անգամ ականավոր գործիչներ, բայց քաջ իմացել և ջերմ զգացմունքներով մշակել են հայոց լեզուն, հայկական կուլտուրան: Այդ ամսագրի էջերում մենք իզուր կփորձենք որոնել սոցիալական դիրքավորման ցայտուն արտահայտություններ: Ամսագիրը ներկայացրել է արհավիրքների միջով անցած բազմաշարժար մի ժողովուրդ և մեծագույն համակրանք է տաժել դեպի ժողովրդական զանգվածները:

Այդ ամսագիրը քաղաքական աչքի ընկնող դեր է խաղացել հունգարա-ռուսական հարաբերությունների ասպարեզում և այդ առումով ունեցել է առաջադիմական մեծ նշանակություն:

Պատահական չէ, որ Հունգարիայում մարդկանց և ամբողջ քաղաքական ուղղությունների առաջադեմ կամ հետադիմական լինելը որոշվում էր հանդեպ ռուսներն ունեցած վերաբերմունքով: Ռուսական ռևոլյուցիոն դեմոկրատների մտքերն ու գործունեությունը ատելի էին հետադիմականներին, և վերջիններս ճգնում էին ապացուցել, որ ռուս ժողովուրդը ցարական դաժան բռնակալների կողմից գլխավորող անմիտ մոլեխների ամբոխ է, և որ Ռուսաստանում անհրաժեշտ է առաջավոր գաղափարների գոյությունը: Այսպիսով, նրանք ամենուրեք ատելություն էին սերմանում հանդեպ ռուսները: Իսկ առաջադեմ հունգարացիները ոչ միայն ծանոթ էին ռևոլյուցիոն դեմոկրատների գաղափարներին, այլև մեծ համակրանքով հետևում էին ցարական ատելի բռնակալության տապալման համար Ռուսաստանի լավագույն մարդկանց մղած պայքարին: «Արմենիա» ամսագրի շնորհիվ հունգարական հասարակայնությունը, հակառակ ավստրիական միապետության ջանքերին, տեղեկացավ ռուս ժողովրդի ազատագրական մեծ միսիայի մասին, ժողովուրդը, որը բազմաշարժար հայ ժողովրդի զգալի մասին ազատեց պարսկական ու թուրքական լծից: Իսկ այստեղից արդեն պարզ է, թե այն ժամանակ ինչքան կարևոր դեր էր խաղում «Արմենիա» ամսագրում հրատարակված խաչատուր Աբովյանի համառոտ կենսագրությունը և անգամ «Վերք Հայաստանի» վեպի բովանդակության համառոտ շարադրումը: Այդպիսի հոդվածները հունգարական ընթերցողին բերում էին այն համոզմանը, որ ցարից ու նրա ծառաներից զատ և անգամ նրանց դեմ պայքարելով, ապրում և աշխատում է ռուս ժողովուրդը՝ դաշնակիցն ու ազատարարը այնպիսի ճնշված ժողովուրդների, ինչպիսիք հայերն են, որոնք արդեն նվաճել էին բոլոր հունգարացիների համակրանքը...

Այդ գործում անշափ մեծ է ու կարևոր «Արմենիա» ամսագրի ծառայությունը: Ամսագրի առաջին խմբագիրներն են եղել Գերգեյ Գովրիկն ու Կրիշտոֆ Սոնգոտը: Վերջինս ամսագրի հրատարակման արդին երկրորդ տարում՝ դարձավ միակ խմբագիրը և մինչև իր կյանքի վերջը մնաց որպես ամսագրի ոգեշնչողը: Եվ երբ մահացավ Սոնգոտը, 1907 թվականին, շուտով և դադարեց ամսագրի հրատարակումը:

Կրիշտոֆ Սոնգոտը, որի անունը ձուլվել է «Արմենիա» ամսագրի պատմության հետ, եղել է գիմնազիայի դասատու, ոգեշնչված հայ և միաժամանակ հունգարական քաղաքացի: Նա հայերեն է թարգմանել հունգարական մեծ պոետ Պետեֆիի բանաստեղծությունները:

Ամսագրի աշխատակիցները գրեթե առանց բացառության հոմագարահայեր էին, թեպետ և ճակատագիրը փոխել էր նրանց ազգանունները ու դարձրել հոմագարական (Շիմաի), գերմանական (Սոնգոտ) կամ ռումինական (Էստեգար), այն ժամանակ, երբ ուրիշ ընտանիքների ազգանունները պահպանել էին հայկական ձևը (Ավետիք)։ «Արմենիա» ամսագրի աշխատակիցներից մեկը՝ Յակար Ջիլինգարյանը, Հունգարիա էր ժամանել Հայաստանից։ Նա ծնվել է 1858 թվականին, Ախալքալաքում, սովորել է Թիֆլիսում, հետագայում վերաբնակվել է Արևմտյան Սվրոպայում, իսկ 1885 թվականից սկսած ապրել է Հունգարիայում, հանդիսանալով ռուսաց լեզվի ուսուցիչ, բանասիրական հոգվածների հեղինակ, հայկական լրագրերի թղթակից և «Արմենիա» ամսագրի աշխատակից։

1907 թվականին լույս ընծայվեց «Արմենիա» ամսագրի վերջին համարը։ Այդտեղ տրված է ամսագրի 21 տարիների գործունեության հաշվետվությունը՝ որպեսզի մենք իմանում ենք, որ այդ ժամանակամիջոցում ամսագրում տպագրվել են՝ 1829 հոգված, 2090 համառոտ հաղորդագրություններ և 396 նկար։ Ինչպես ասվում է հրաժեշտի խոսքում, «Արմենիան» դադարեցնում է իր գոյությունը որպես ամսագիր և գործունեությունը շարունակում է հայկական թանգարանային ընկերության ալմանախի ձևով ... Բայց Սեչենիի անվան գրադարանի ֆոնդում այդպիսի ալմանախ չկա։ Հավանաբար, այն երբեք էլ լույս չի տեսել։

Այսպես է ավարտվում Հունգարիայի հայերի ազնիվ ձեռնարկության՝ «Արմենիա» ամսագրի պատմությունը։

* * *

1903—1911 թվականներին հրատարակվել է համաշխարհային գրականության պատմության տեսության քառասորյակը՝ Գուստավ Հայնրիխի խմբագրությամբ։ Առաջին հատորում առանձին խորագրի տակ տրվում է հայ գրականության հազարհինգհարյուրամյա պատմության համառոտ ակնարկը։ Այդ ակնարկի հեղինակը հոմագարահայ լեզվաբան, Բուդապեշտի համալսարանի հայոց լեզվի և հայ գրականության պրոֆեսոր Լուկաշ Պատրուբանն է։ Հոգվածում նա կանգ է առնում յուրաքանչյուր հարյուրամյակի հայ գրականության վրա՝ Ակնարկն ավարտվում է Նալբանդյանի ու Պատկանյանի ստեղծագործությունների գնահատմամբ։

1911 թվականին մեզ արդեն ծանոթ Լասլո Գոպչան հրատարակում է հայկական ժողովրդական առասպելների ժողովածու։ Իհարկե, դա առաջին անգամ չէր, որ հունգարական լեզվով հնչում էր հայկական ժողովրդական ստեղծագործությունը։

Հունգարական գիտական մամուլն ուշադրություն դարձրեց այդ ժողովածուի վրա։ Հունգարական ազգագրական ընկերության «Էթնոգրաֆիա» ամսագիրը հրապարակեց գիտնական-ֆուլկլորիստ Յանոշ Բերգե-Նադի գրախոսականը։ Հեղինակը ժողովածուի առանձին առասպելներ բաղդատում է հունգարական և օտարերկրյա տարբերակների հետ և պնդում, որ դրանք ոչ թե առասպելներ են, այլ՝ հեքիաթներ։

Խոսելով հունգարական ընթերցողներին հայ գրականությանը ծանոթացնելու գործում «Արմենիա» ամսագրի մատուցած ծառայությունների մասին,

անհրաժեշտ է նշել, որ հայկական պոեզիայի՝ այդ ամսագրի էջերում հրատարակված թարգմանություններն ունեցել են միայն ճանաչողական նշանակություն: Թարգմանությունների ցածր որակի պատճառով հայկական պոեզիայի իսկական հմայքն ու գեղեցկությունը չեն հասել հունգարական ընթերցողին: Ինչ վերաբերում է հայ արձակին, ապա այն բոլորովին չի թարգմանվել: Հունգարական լեզվով հայ գրականության թարգմանության հարցին իսկական գիտական մոտեցում ի հայտ եկավ բավականաչափ ուշ՝ Հունգարիայում ժողովրդա-դեմոկրատական կարգերի հաստատումից հետո՝ երբ Հունգարիայի աշխատավորները հնարավորություն ունեցան լայնորեն ծանոթանալու ՍՍՌՄ ժողովուրդների գրականությանը:

Այստեղ տեղին է հիշատակել հայ-հունգարական գրական կապերի ևս մեկ փաստի մասին: 1939 թվականին, երբ Հունգարիայում տիրապետում էր ֆաշիստական ռեակցիան, Մոսկվայում հունգարական էմիգրանտների օրգան «Ույ խանգ» («Նոր ձայն») ամսագիրը հրատարակեց հայկական հերոսական «Սասունցի Դավիթ» էպոսին նվիրված մեծածավալ հոդված և հատվածներ էպոսից՝ հունգարերեն գեղարվեստական թարգմանությամբ:

Հունգարական «Ույ խանգ» ամսագրի այդ հոդվածը լույս տեսավ երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին ամիսներին: Իսկ երբ սովետական զորքերն ազատագրեցին մի շարք երկրներ, այդ թվում նաև Հունգարիան, նոր դարաշրջան սկսվեց ոչ միայն հունգար ժողովրդի պատմության, այլև հայ-հունգարական կուլտուրական և գրական կապերի պատմության մեջ:

Հայ-հունգարական գրական կապերի նոր ժամանակաշրջանը բնորոշվում է հետևյալ գծերով. հայկական պոեզիան Հունգարիայում հրատարակվում է բանաստեղծ-թարգմանիչների գեղարվեստական թարգմանությամբ, հունգարական ընթերցողներն սկսում են, վերջապես, ծանոթանալ նաև հայ արձակին: Սակայն, այդ չի նշանակում, որ հայ բարձրարվեստ գրականությունը՝ հազարհինգհարյուրամյա գրականությունը և այսօրվա Սովետական Հայաստանի գրականությունը, բավարար չափով թարգմանված է հունգարերեն լեզվով: Կա մի հանգամանք, որի շնորհիվ «Արմենիա» ամսագրի թարգմանիչները գերազանցում են այսօրվա բանաստեղծ-թարգմանիչներին: Առաջինները թարգմանում էին բնագրից, թեպետ և իրենք միշտ չէ, որ օժտված էին լինում բանաստեղծական շնորհքով, իսկ երկրորդները, լինելով բանաստեղծներ, թարգմանում են ոչ թե բնագրից, այլ ռուսական թարգմանությունից, իսկ երբեմն էլ չիմանալով ռուսաց լեզուն՝ ռուսական թարգմանություններից կատարված տողացի թարգմանությունից: Այդ պատճառով հայ գրականության հունգարական նոր թարգմանությունները, թեպետ և գեղարվեստական իմաստով անհամեմատելիորեն ավելի բարձր են կանգնած, քան հին թարգմանությունները, այնուամենայնիվ, իսկության և բնագրին հարազատ լինելու տեսակետից զիջում են նրանց:

Այժմ, նվաճումների և թերությունների այս համառոտ ակնարկից հետո, մի քանի խոսք ասենք այժմյան Հունգարիայում հայ գրականության տարածման մասին:

Հայկական ժողովրդական ստեղծագործությունից հունգարական ընթերցողին հայտնի են սովետական ժողովուրդների հերիաթների տարբեր ժողովածուներում տպագրված հերիաթները: Սովետահայ ֆուլկլորից թարգմանված են նաև ժողովրդական մի քանի երգեր:

Հայ բանաստեղծների սովետական սերունդը Հունգարիայում ներկայացված է ի դեմս Ավետիք Իսահակյանի, Հակոբ Հակոբյանի, Եղիշե Չարենցի, Նաիրի Զարյանի, Աշոտ Գրաշու, Սարմենի, Գուրգեն Բորյանի, Սիլվա Կապուտիկյանի, Գևորգ էմինի:

Հայ արձակից տպագրված են Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոսը», Վախտանգ Անանյանի «Մանկությունը լեռներում» գիրքը, Նորա Աղամյանի «Մինիստրությունն աղջիկը» և Հովհաննես Դուկասյանի «Փոքրիկ վրիժառուները»: Պարբերական մամուլում լույս են տեսել սովետահայ գրողների մի շարք պատմվածքներ:

Հունգարիայում հայ գրականության տարածման մասին մեր պատկերացումը ոչ լրիվ կլիներ, եթե չխոսեինք երկու նշանակալից անտոլոգիաների և արտասահմանյան գրականության հունգարական ամսագրի մասին:

Սովետական պոեզիայի անտոլոգիան Հունգարիայում հրատարակվել է երկու անգամ, առաջին հրատարակությունը, մեկ հատորով, եղել է 1952 թվականին, իսկ երկրորդը՝ երկու հատորով, 1955 թվականին: Առաջին հրատարակության մեջ հայկական պոեզիան ներկայացված է 5 պոետների 16 բանաստեղծություններով, իսկ երկրորդի մեջ՝ 7 պոետների 18 բանաստեղծություններով: Բացի Ավետիք Իսահակյանից, Նաիրի Զարյանից, Աշոտ Գրաշուց, Սարմենից և Գուրգեն Բորյանից, որոնք արդեն ներկայացվել էին առաջին հրատարակության մեջ, երկրորդ հրատարակությունը հունգարական ընթերցողներին ծանոթացնում է Սիլվա Կապուտիկյանի և Գևորգ էմինի ստեղծագործություններին: Երկու հրատարակությունների վերջում տրվում են բանաստեղծների մանրամասն կենսագրությունները:

Ներկայումս Հունգարիայում 6 հատորով տպագրվում է «Համաշխարհային գրականության անտոլոգիան»: Լույս են տեսել հետևյալ հատորները՝ առաջին (անտիկ աշխարհ), երկրորդ (միջին դարեր և վերածնություն), չորրորդ (19-րդ դար) և հինգերորդ (ՍՍՌՄ ժողովուրդների գրականության 20-րդ դարը): Բոլոր դարերի ու բոլոր ժողովուրդների գրականությունների այս հարուստ գանձարանում լայնորեն ներկայացված են ՍՍՌՄ ժողովուրդները: Ինչպես ասվեց, մեկ հատոր ամբողջովին նվիրված է 20-րդ դարի գրականությանը: Բաց մյուս հատորներում նույնպես նշանակալի քանակով զետեղված են ՍՍՌՄ ժողովուրդների հեղինակների ստեղծագործությունները: Շնորհիվ այն բանի, որ յուրաքանչյուր հատորում նյութերը սիստեմավորված են ըստ ժողովուրդների, այս հրատարակությունը կարտացոլի ոչ միայն համաշխարհային գրականության ընդհանուր պատկերը, այլև՝ առանձին ազգային գրականությունների պատմությունը:

Երկրորդ հատորում հայ գրականությունը ներկայացնում են «Սասունի Դավիթ» էպոսի հատվածները: Բացի այդ, տրվում է ամբողջ էպոսի բովանդակությունը և էպոսի հայտնագործման բանասիրական պատմությունը: Հայ գրականության 19-րդ դարը ներկայացված է Խաչատուր Աբովյանով, իսկ 20-րդ դարը՝ Ավետիք Իսահակյանով, Հակոբ Հակոբյանով, Հովհաննես Թումանյանով և Սիլվա Կապուտիկյանով:

1956 թվականից սկսած Հունգարիայում հրատարակվում է «Նադիվադ» («Ամբողջ աշխարհը») ամենամսյա գրական հանդեսը, որի նպատակն է արտասահմանյան երկրների ժամանակակից գրական կյանքի ցուցադրումը: Այդ ամսագրում արդեն հրապարակվել են Ավետիք Իսահակյանի ու Գևորգ էմինի

ստեղծագործությունները, իսկ ամսագրի 1958 թվականի տասներորդ համարը զգալի չափով նվիրված է եղել ժամանակակից հայ գրականությանը: Մի հետաքրքրական հոդված հանգամանորեն պատմում է մեր դարում հայ գրականության զարգացման մասին: Հոդվածում մեծ տեղ է հատկացված Հակոբ Հակոբյանի և Նղիշե Չարենցի ստեղծագործությունների վերլուծմանը: Ամսագրում տպագրված են նաև Դերենիկ Դեմիրճյանի ու Վիդեն Խեչումյանի պատմրվածքները, Իուրգեն Իորյանի պիեսից մեկ հատված, Նղիշե Չարենցի բանաստեղծությունները, ինչպես նաև Մուրացյանի «Գեորգ Մարգարետովի» և Աղավնու «Շիրակ» վեպերի գրախոսականները ռուսական հրատարակությունների առթիվ:

«Նաղվիլագ» ամսագրի «հայկական համարը» նշանակալից ավանդ հանդիսացավ Հունգարիայում հայ գրականության տարածման գործում:

Ամփոփելով մեր խոսքը, պետք է նկատել, որ ընայած հարուստ տրադիցիաներին, հունգարական ընթերցողին հայ գրականությանը ծանոթացնելու գործը նոր է սկսվում: Հունգարական ընթերցողին դեռևս հարկավոր է ծանոթացնել հայ դասական գրականությանը, ամենից առաջ արձակին, որը ծայրահեղորեն քիչ է թարգմանված, ինչպես նաև հին ու ժամանակակից հեղինակների հարուստ պոեզիային և հատկապես նրանց, որոնց ստեղծագործությունները մի ժամանակ հայտնի են եղել թույլ, ոչ պոետական թարգմանություններով: Այդ խնդիրը կարող են լուծել միայն նրանք, ովքեր իրենց մեջ կմիավորեն հին ու նոր թարգմանիչների առավելությունները՝ հայոց լեզվի գիտնալը և բանաստեղծական տաղանդը: Միայն այս երկու հատկանիշների զուգակցմամբ կարելի կլինի հունգարական ընթերցողին մատուցել հայ գրականության լիարժեք թարգմանություններ: Հուսանք, որ Սովետական Միության և Հունգարիայի միջև կուլտուրական փոխանակման և համագործակցության շրջանակներում հայ-հունգարական գրական կապերը կամրապնդվեն և կտան իրենց արգասավոր արդյունքը: